

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ԱՄԲԻՈՆԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Դասընթացներ

«Բժշկական սաբանական առարկաների» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝

N	Առարկա	Ֆակուլտետ
1.	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն	Բուժական
	Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն, /բ/խ հյուսվ.-II կուրս/	Ստոմատոլոգիական
2.	Մարդու անատոմիա	Բուժական
	Մարդու անատոմիա, /գ/պ անատոմիա –II կուրս/	Ստոմատոլոգիական
3.	Կենսաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
4.	Տոպոգրաֆիկ անատոմիա և օպեր. վիր	Բուժական Ստոմատոլոգիական
5.	Նորմալ ֆիզիոլոգիա	Բուժական
	Նորմալ ֆիզիոլոգիա, դիմաձևոտային հատվածի ֆիզիոլոգիա	Ստոմատոլոգիական
6.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	Բուժական
	Մանրէաբանություն, բ/խ մանրէաբանություն	Ստոմատոլոգիական
7.	Ախտաբանական անատոմիա	Բուժական
	Ախտաբանական անատոմիա, գ/պ ախտ. անատոմիա	Ստոմատոլոգիական
8.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	Բուժական
	Ախտաբանական ֆիզիոլոգիա, գ/պ ախտ.ֆիզիոլոգիա	Ստոմատոլոգիական
9.	Դատական բժշկություն	Բուժական Ստոմատոլոգիական

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան որակյալ մասնագետներով և 2020-21 ուս.տարում ունեցել է թվով 14 աշխատակից, որից՝

- գիտությունների դոկտոր, պրոֆեսոր – 1,
- գիտությունների թեկնածու, դոցենտ- 3,
- գիտությունների թեկնածու – 4,
- դասախոս- 5,
- ուսումնաօժանդակ -1:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 41 տարեկան: Դասախոսները գերազանց տիրապետում են անգլերենին՝ օտարալեզու խմբերում դասախոսություններ անց կացնելու համար:

Ամբիոնի դասախոս, «Մարդու անատոմիա» դասընթացի մասնագետ Ն. Խլդայանը չի դասավանդել աշնանային կիսամյակում՝ ֆիզիկական արձակուրդի անցնելու պատճառով: Նրան փոխարինել է կ.գ.թ., դոցենտ Գ. Արաջյանը:

«Ախտաբանական անատոմիա» դասընթացի մասնագետ Հ. Բարսեղյանի ծանրաբեռնվածության պատճառով «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնը հայտարարել և մրցույթային հիմունքներով աշխատանքի է ընդունել ևս մեկ մասնագետի: Ա. խաչպանյանը սկսել է դասավանդել զարնանային կիսամյակում:

«Կենսաբանություն» առարկան դասավանդող դասախոս Ի. Բագուկյանը, «Ախտաբանական անատոմիա» դասընթացի մասնագետ Հ. Բարսեղյանը և «Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա» դասընթացի մասնագետ Ա. Մարգարյանը 2021-22 ուս. տարին չեն շարունակելու դասավանդել այլ աշխատանքի ընդունվելու կամ ծանրաբեռնվածության պատճառով, ուստի «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնը վերոնշյալ դասընթացները դասավանդող մասնագետների կարիք ունի, որի կապակցությամբ հայտարարվել է մրցույթ:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

- 2020-2021 ուսումնական տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է հեռավար՝ այդ նպատակով հիմնականում օգտագործելով Zoom հարթակը:
- ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքում առկա են համապատասխան մասնագիտացված կաբինետներ, լսարաններ և լաբորատորիաներ՝ ամբիոնում դասավանդվող առարկաների արդյունավետ դասավանդման համար: Դասախոսության համար նախատեսված լսարանները հագեցած են անհրաժեշտ տեսացուցադրման տեխնիկայով (համակարգիչ, պրոյեկտոր և այլն): Լաբորատոր և գործնական պարապմունքների համար նախատեսված մասնագիտացված կաբինետները հագեցած են անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով, գործիքներով և միկրո-, մակրոպատրաստուկներով:
- «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ն հանդիսանում է «Ախտաբանական անատոմիա» և «Դատական բժշկություն» դասընթացների կլինիկական բազան: Այս բուժաստատությունը կառավարության որոշմամբ վերապրոֆիլավորվել և համավարակի պայմաններում կորոնավիրուսային հիվանդության բուժմամբ է զբաղվում:

- Ցանկալի է մասնագիտացված կաբինետները և լաբորատոր սենյակները համալրել նոր և ժամանակակից պարագաներով ու սարքավորումներով, որը դրականորեն կանդրադառնա ուսանողների կողմից հմտությունների ձեռք բերման վրա, ինչպես նաև նրանց թույլ կտա կատարել գիտահետազոտաան աշխատանքեր՝ դասախոսների ղեկավարությամբ:
- Ամբիոնին անհրաժեշտ է ունենալ տպող և պատճենող սարք՝ վարչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Փանոսյան Հ.Հ., Մարգարյան Ա.Ա., Բագուկյան Ի.Լ., Թոչունյան Ա.Հ. 2020. *Մոլեկուլային մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ ուսումնամեթոդական ձեռնարկ*, ԵՊՀ հրատարակչություն, 120 էջ:

Գրքի խմբագրում

Egamberdieva D., Birkeland N.-K., Li W.-J., **Panosyan H.** (Eds.) **2021.** Microbial Communities and their Interactions in the Extreme Environment. Microorganisms for Sustainability 32, Springer Singapore, XII, 341 p.

Հոդվածներ

2020

1. Dzhuraeva M., M. Shokirova, Azaryan A., **Panosyan H.**, Bobodzhanova Kh., Birkeland N.-K. **2020.** Genome Sequence of Escherichia coli Strain Tj, Isolated from the Varzob River in Tajikistan. *ASM Journals, Microbiology Resource Announcements*, 9(41): doi.org/10.1128/MRA.00867-20
2. **Panosyan H., Margaryan A.**, Birkeland N.-K. **2020.** Geothermal springs in Armenia and Nagorno-Karabakh: potential sources of hydrolase-producing thermophilic bacilli. *Extremophiles*, 24: 519–536.
3. **Panosyan H.H.** **2020.** Bacterial profiles of Karvachar hot spring identified by combination of different molecular approaches. *Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences*, 54(252): 147-53.
4. Shurigin V., Egamberdieva D., Li L., Davranov K., **Panosyan H.**, Birkeland N.-K., Wirth S., Bellingrath-Kimura S.D. **2020.** Endophytic bacteria associated with halophyte *Seidlitzia rosmarinus* Ehrenb. ex Boiss. from saline soil of Uzbekistan and their plant beneficial traits. *Journal of Arid Land*, 12: 730–740.
5. Simonyan A.G., Sargsyan R.R., **Panosyan H.H.**, Trchounian A.H. **2020.** Study of antibacterial and antioxidant activities of saxicolous lichen *Xanthoparmenia stenophyllia*. *Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences*, 54(252): 132-37.
6. Казарян К.В., Филипосян Т.А., **Унанян Н.Г.** **2020.** Влияние окситоцина на электрическую активность средней зоны маточного рога. *Доклады НАН РА*, 120(3): 214-221.
7. Казарян К.В., **Унанян Н.Г.**, Мкртчян А.В. **2020.** Спонтанная электрическая активность фаллопиевых труб крысы. *Журнал эволюционной биохимии и физиологии*, 56(3): 245-250.
8. Мушегян Г. Х., Погосян М.В., **Араджян Г.М.**, Мохаммед Саид Кадим, Саркисян Дж.С. Соотношение возбуждательных и тормозных синаптических процессов в антиноцицептивных вентральных задне-латеральных таламических нейронах на ротеноновой модели болезни паркинсона. // Частное учреждение дополнительного профессионального образования «научно-исследовательский и образовательный центр». Интеграция науки и практики в современном мире. Материалы Международной научно-практической конференции 26 июня 2020 г. стр. 37-51.

2021

9. Jiang H., Huang J., Li L., Huang L., Manzoor M., Yang J., Wu G., Sun X., Wang B., Egamberdieva D., **Panosyan H.**, Birkeland N.-K., Zhu Z., Li W. **2021**. Onshore soil microbes and endophytes respond differently to geochemical and mineralogical changes in the Aral Sea. *Science of The Total Environment*, 765: 142675.
10. **Panosyan H., Margaryan A.** **2021**. Extremophiles Thriving in Extreme Ecosystems of Armenia, In: *Extreme Environments Unique Ecosystems – Amazing Microbes*, CRC Press, pp. 234-252.
11. Saghatelyan A., **Margaryan A., Panosyan H.**, Birkeland N.-K. **2021**. Microbial Diversity of Terrestrial Geothermal Springs in Armenia and Nagorno-Karabakh: A Review. *Microorganisms*, 9(7): 1473.
12. Saghatelyan A., **Panosyan H.**, Trchounian A., Birkeland N.-K. **2021**. Characteristics of DNA polymerase I from an extreme thermophile, *Thermus scotoductus* strain K1. *MicrobiologyOpen*, 10(1): 1149.
13. Казарян К.В., Пилипосян Т.А., **Унанян Н.Г.**, Чибухчян Р.Г. **2021**. Особенности электрической активности среднего сегмента маточной трубы. *Проблемы современной науки и образования*, 3(160): 6-15.
14. Казарян К.В., Пилипосян Т.А., **Унанян Н.Г.**, Чибухчян Р.Г. **2021**. Сравнительный анализ спонтанной электрической активности маточных труб крысы. *Доклады НАН РА*, 121(2): 142-147.
15. Мушегян Г.Х., **Араджян Г.М.**, Погосян М.В., Саркисян Дж.С. Динамика импульсной активности нейронов вентрального постеролатерального ядра (vpl) таламуса крыс в ответ на стимуляцию соматосенсорной коры на модели болезни паркинсона. Ученые записки крымского федерального университета имени в. и. вернадского. биология. химия Научный журнал. 2021. Том 7 (73), № 1; стр. 111-124.
16. Тадевосян Л.Ж., Погосян М.В., Даниелян М.А., **Степанян А.Ю., Минасян А.Л.**, Аветисян З.А., Саркисян Дж. С. **2021**. Синаптические постстимульные процессы в антиноцицептивном околосинаптическом сером веществе мозга при активации большого ядра шва на модели болезни Паркинсона в условиях протекции синэстролом. *Медицинская наука Армении* 61(3): 38-49.
17. Тадевосян Л.Ж., Погосян М.В., **Степанян А.Ю.**, Даниелян М.А., **Минасян, А. Л.**, Саркисян Дж. С. **2021**. Синаптические постстимульные проявления активности в антиноцицептивном большом ядре шва мозга при активации околосинаптического серого вещества мозга на модели болезни Паркинсона в условиях протекции меланином. *Медицинская наука Армении*, 61(2): 44-55.

Վերապատրաստումներ

Գոհար Արաջյան - Elsevier professional tools for working with scientific and technical information, Elsevier Russia, 01 March, 202, online.

Գոհար Արաջյան - Elsevier professional tools for working with scientific and technical information, Elsevier training, 26 April, 2021, online.

Գոհար Արաջյան - Scopus Author ID - the author's profile in Scopus and the possibility of its correction, Elsevier training session, 30 April, 2021, online.

Այլ գիտաուսումնական ձեռքբերումներ

Հասմիկ Բարսեղյան – մասնակցություն դասընթացին «Բժշկական լաբորատորիաներ. որակին և կոմպետենտությանը ներկայացվող պահանջներ» ԻՍՕ 15189 ստանդարտի հիմունքները: Ապրիլ 12-16, 2021, ք Երևան, ՀՀ, շնորհվել է 10 կրեդիտ:

Մասնակցություն գիտաժողովներին

2020

1. Dzhuraeva M.M., Bobodzhanova Kh.I., **Panosyan H.H., Margaryan A.A.**, Birkeland N.-K. **2020**. Thermophilic bacilli isolated from Khoja Obi Garm (Tajikistan) geothermal spring. *Electronic abstract*

book FEMS Online Conference on Microbiology in association with the Serbian Society of Microbiology, 28-31 October, 2020, p. 81.

2. **Khachpanyan A.**, May 18-20, **2021**. Cleveland Clinic OMInar in Pathology, held by the Open Medical Institute and its partner institutions, the Cleveland Clinic and the Medical University of Vienna.
3. **Panosyan H.** **2020**. Thermophiles and halophiles found in Armenia: from diversity and biotechnology. *Electronic abstract book FEMS Online Conference on Microbiology in association with the Serbian Society of Microbiology*, 28-31 October, 2020, p. 390.

Անդամակցություն գիտական կազմակերպություններին

- **Նաիրա Հունանյան** – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- **Նաիրա Հունանյան** – «FENS» ֆեդերացիա,
- **Նաիրա Հունանյան** – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- **Հարություն Ստեփանյան** – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- **Հարություն Ստեփանյան** – «FENS» ֆեդերացիա,
- **Հարություն Ստեփանյան** – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- **Գոհար Արաջյան** – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- **Գոհար Արաջյան** – «FENS» ֆեդերացիա,
- **Գոհար Արաջյան** – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),

Կոչումներ

- **Արմինե Մարգարյան** - ԵՊՀ դոցենտ, 2021

Մասնագիտական անդամակցություն

- **Արմինե Մարգարյան** - Ամերիկյան մանրէաբանների միության (ASM)
- **Արմինե Մարգարյան** - Հայաստանի մանրէաբանների միության (FEMS)
- **Արմինե Մարգարյան** - Հայաստանի կենսաքիմիկների միություն (FEBS)

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.1 ՊԴ կազմի վերապատրաստման հնարավոր ուղիների որոնում

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսական կազմը մասնակցել է համալսարանի կողմից կազմակերպված «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովման համատեքստը» (*ՀԻՄՔ՝ ամբիոնի ՊԴ կազմից 11 մասնակիցների հավաստագրեր*) և «Հոգեբանություն և մանկավարժական տեխնոլոգիաներ» թեմաներով վերապատրաստումներին:

Գործողություն 1.2. Ամբիոնի առարկայական դասընթացների թվայնացում

2020-2021 ուս. տարվա ընթացքում թվայնացվել են ամբիոնի դասընթացների նյութերը՝ մասնագիտական գրականություն, դասախոսություններ, տեսաներկայացումներ (*ՀԻՄՔ՝ դասախոսությունների էլեկտրոնային բազա և համապատասխան մասնագիտական գրականություն՝ գրադարանում, տեսաներկայացումների բազա՝ ԱԲՀ համապատասխան SEAGATE Basic Portable Drive կրիչում*):

Գործողություն 1.3. Առարկայական դասընթացների վերաբերյալ տեսանյութերի բազայի ստեղծում

Տե՛ս 1.2 կետը:

Գործողություն 1.5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների կազմակերպման, թերությունների հայտնաբերման և քննարկման միջոցով ուսուցման որակի բարելավում

- Ըստ կիսամյակային դասալսումների ժամանակացույցի աշնանային կիսամյակում ամբիոնում պլանավորվել և իրականացվել են 12, իսկ գարնանային կիսամյակում՝ 13 դասալսումներ (**ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈԼԾ 7՝ 2020-2021 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ**) :
- Ուսումնական գործընթացը կազմակերպվել է հեռավար ձևաչափով: Դասալսումները հիմնականում իրականացվել են ամբիոնի վարիչի և դասախոսների (փոխադարձ դասալսումներ)՝ հեռավար դասընթացին անմիջական մասնակցությամբ: ZOOM հարթակի համապատասխան link/PMI/passcode միջոցով նրանք միացել են ամբիոնի տարբեր առարկաներից հեռավար դասերին: Որոշ դասալսումների արձանագրություններ կազմվել են հեռավար դասի տեսաձայնագրության դիտման միջոցով: Դասալսումները քննարկվել են համապատասխան ամբիոնի նիստերում, ներկայացվել են դիտողությունները և առաջարկությունները: ՊԴ կազմին առաջարկվել է վերանայել դասավանդման մեթոդները կամ վերացնել այն թերությունները, որոնք եղել են դասալսման արձանագրման ընթացքում (**ՀԻՄՔ՝ նկարների, տեսաձայնագրությունների բազա ԱԲՀ համապատասխան կրիչում (SEAGATE Basic Portable Drive), ամբիոնի արձանագրություններ N 6, 7, 9, 10, 11 դասալսումների քննարկումների վերաբերյալ**):
- Նոր ընդունված «Ախտաբանական անատոմիա» առարկայի դասախոս Աննա Խաչպանյանի հետ տարվել են մեթոդական խորհրդատվություններ՝ ամբիոնի վարիչը արտահերթ դասալսումներ է իրականացրել Ա. Խաչպանյանի կողմից դասավանդվող խմբերում (II կուրս, 201 և 202 խմբեր) (**ՀԻՄՔ՝ նկարներ դասալսումներից SEAGATE Basic Portable Drive կրիչում, 18.03.2021, 202 խումբ և 23.03.2021, 201 խումբ**):

Գործողություն 1.6. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

- ՊԴ կազմի համալրումը բարձրակարգ մասնագետներով իրականացվում է մրցույթային հիմունքներով և ըստ պահանջի: Հաշվետու տարում Ա. Խաչպանյանն է միացել ամբիոնի ՊԴ անձնակազմին (**ՀԻՄՔ՝ աշխատանքային պայմանագիր, ՄՈՒԿ բաժին**):
- Ամբիոնի դասախոսները պարբերաբար իրականացվող վերապատրաստումների արդյունքում բարելավում են ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ մանկավարժական գիտելիքները: Վերապատրաստումներն անցկացվում են հանրապետական և միջազգային հարթակներում (**ՀԻՄՔ՝ վերապատրաստման հավաստագրերի կրկնօրինակներ, անձնական գործեր, ՄՈՒԿ բաժին**):

Գործողություն 1.9. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

Ամբիոնային աշխատանքների պլանավորումը և համակարգումն իրականացվել է հավետու ժամանակահատվածի ընթացքում անընդհատ՝ ներառելով կարճաժամկետ և

միջնաժամկետ պլանավորումները: Իրականացվել է հերթապահությունների, դասալսումների անցկացման, կիսամյակային միջանկյալ և ամփոփիչ քննությունների, և այլ հարցերի պլանավորում և իրականացում (*ՀԻՄՔ՝ ամբիոնի նիստերի 12 արձանագրություններ*):

Գործողություն 1.11. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի նիստերին, որոնց քննարկումներին ամբիոնը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն նիստերի օրակարգերում քննարկվող տարբեր հարցերի վերաբերյալ (*ՀԻՄՔ՝ ԱԲՀ գիտխորհրդի նիստերի արձանագրություններ*):

Գործողություն 1.12. Միջամբիոնական փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում՝ փորձի փոխանակում

Հաշվետու ժամանակաշրջանում միջամբիոնական փոխադարձ դասալսումներ չեն իրականացվել՝ համավարակով պայմանավորված հեռավար ուսուցման անցման և այլ ամբիոնների դասախոսների հետ կապի ապահովման, նրանց հեռավար դասերին միացման դժվարությունների հետևանքով:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների կազմակերպում, անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և հաստատվել են ամբիոնի հերթապահության գրաֆիկները՝ աշնանային և գարնանային կիսամյակների համար: Խորհրդատվություններն իրականացվել են Zoom հեռավար հարթակում: Յուրաքանչյուր դասախոս հերթապահության ժամանակացույցի սահմանված օրը և ժամին միացել է հարթակին և անհրաժեշտության դեպքում տրամադրել է խորհրդատվություն: Բացի սահմանված գրաֆիկից, խորհրդատվություններ տրամադրվել են պարբերաբար՝ ելնելով ուսանողների պահանջից: Այդ նպատակով կիրառվել են նաև Messenger, Viber և այլ հավելվածներ (*ՀԻՄՔ՝ նկարների, տեսաձայնագրությունների բազա ԱԲՀ համապատասխան կրիչում (SEAGATE Basic Portable Drive), 2020-2021 ուս.տարվա խորհրդատվությունների մատյանի համապատասխան գրանցումներ*):

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 3.3. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը

2020-21 ուս. տարվա ընթացքում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի ՊԴ կազմը մասնակցել է հանրապետական և միջազգային կոնֆերանսներին, անցել վերապատրաստումներ արտերկրում և հանրապետությունում, տպագրել է գիտական հոդվածներ, թեզիսներ տարբեր ամսագրերում և ժողովածուներում: Սակայն այդ աշխատանքների քանակը զգալիորեն զիջում է նախորդ տարիների թվերին, որի պատճառը աշխարհում տիրող համավարակի անբարենպաստ պայմաններն են (*ՀԻՄՔ՝ ամբիոնի*

գիտական գործունեության՝ դասախոսների հոդվածների, թեզիսների, կոնֆերանսների մասնակցության մասին տեղեկություններ ԱԲՀ գիտական մասի համակարգում):

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.1. Ուսանողների հետ հետադարձ կապի ապահովման բարելավում

- Ուսանողների հետ հետադարձ կապն ապահովվել է ինչպես դասերի ընթացքում, այնպես էլ դասերից դուրս: Համացանցում բացվել են ըստ խմբերի հարթակներ, որոնց միջոցով մշտապես կապ է ապահովվում ուսանողների, համապատասխան դասախոսների և համալսարանի ուսումնական մասի միջև: Ամբիոնի վարիչի կողմից ուսանողների պարբերաբար հարցումներ են իրականացվել ամբիոնում դասավանդվող առարկաների վերաբերյալ, դրանց արդյունքները քննարկվել են պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Թերթությունների կամ վիճելի հարցերի առկայության դեպքում արագ առաջարկվել են օպտիմալ լուծումներ և անմիջապես շտկվել:
- Ամբիոնի դասախոսներից Ն.Գ. Հունանյանը հանդիսանում է 301 և 302 խմբերի կուրսղեկը: Նա բազմիցս հեռավար հանդիպումներ է կազմակերպել ուսանողների հետ, անհրաժեշտության դեպքում այս հանդիպումներին միացել են նաև դեկան Ա. Կարապետյանը և ուսումնական մասի այլ ներկայացուցիչներ: Քննարկվել են ուսանողներին հուզող բազմաթիվ հարցեր (*ՀԻՄՔ՝ 25.02.2021թ խմբերի և ԱԲՀ ղեկավար կազմի հանդիպման կուրսղեկի արձանագրություն, ինչպես նաև նկարներ ԱԲՀ SEAGATE Basic Portable Drive կրիչում*): Ն. Հունանյանի կողմից կարգավորել է նաև այս խմբերի ուսումնական գործընթացը՝ հեռավար դասերին ուսանողների միացումը, նրանց առաջադիմությունը և այլն: Կուրսղեկը մշտական կապի մեջ է եղել խմբերին դասավանդող դասախոսների հետ: Նա պարբերաբար ներկայացրել է նաև դասընթացների ժամաքանակը / կրեդիտները, ԱԲՀ կարգերը, գնահատման համակարգի փոփոխությունները և այլ կարևոր ինֆորմացիա: (*ՀԻՄՔ՝ կուրսղեկի հետ պարբերաբար հանդիպման նկարների բազա ԱԲՀ SEAGATE Basic Portable Drive կրիչում*): Այս արդյունավետ համագործակցությունն է նաև ուսանողների առաջադիմության բարելավման գրավականը, որը հատկապես նկատելի է 302 խմբում:

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին

Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Համալսարանի միջոցառումներին և վերապատրաստումներին, որոնք իրականացվել են ՈԱ բաժնի կողմից.

- «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովման համատեքստը» (*ՀԻՄՔ՝ ամբիոնի ՊԴ կազմից 11 մասնակիցների հավաստագրեր*),
- «Հոգեբանություն և մանկավարժական տեխնոլոգիաներ» :

«ԲՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ»

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

կ.գ.թ. Ն.Գ. ՀՈՒՆԱՆՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում